

**ՀՀ ՊՆ ԳՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՓԱՇԱՅԱՆ ՀՐԱՅՐ ԱԲՐԻԿԻ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ  
ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ԻԳ.00.01 «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն»  
մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության**

**ՍԵՂՍԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ - 2015**

---

**ИНСТИТУТ НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ  
ИССЛЕДОВАНИЙ ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА МО РА**

**ГРАЙР АБРИКОВИЧ ПАШАЯН**

**ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТЫ В ДОКУМЕНТАХ И В ПРОЦЕССЕ  
УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОЙ ПРОБЛЕМЫ**

**АВТОРЕФЕРАТ**

диссертации на соискание ученой степени кандидата политических наук по  
специальности 23.00.01 - «История и теория политической науки»

**ЕРЕВАН – 2015**

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում**

**Գիտական ղեկավար՝** ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Ա. Ս. Մանասյան**


**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** քաղաքական գիտությունների դոկտոր **Տ. Տ. Լոյսարյան**  
քաղաքական գիտությունների թեկնածու **Հ. Ռ. Նիկողոսյան**

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. հունիսի 9-ին, ժ.16:00-ին, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 «Քաղաքական գիտություններ և միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում: Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան - 0037, Կ. Ուլնեցու փող. 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԱՌ-ՀԻ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. մայիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմ. գիտ. դոկտոր  **Պ. Ա. Չորանյան**

---

**Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА.**

**Научный руководитель:** Член-корреспондент НАН РА  
д. фил. н. проф. **А. С. Манасян**


**Официальные оппоненты:** доктор политических наук  
**Т. Т. Кочарян**  
кандидат политических наук  
**О. Р. Никогосян**

**Ведущая организация:** Ереванский государственный университет

Защита состоится 9 июня 2015г., в 16:00 часов на заседании специализированного совета 056 «Политические науки и международные отношения» ВАК РА, действующего по адресу ул. К. Улнеци 56/6, г. Ереван - 0037, Республика Армения.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ИНСИ.

Автореферат разослан 7 мая 2015г.

Ученый секретарь специализированного совета  
доктор исторических наук  **Պ. Ա. Չոբանյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Արդի աշխարհում սեփական իրավունքների և շահերի պաշտպանության հիմնական ուղիներից ու միջոցներից մեկը ընտրած դիրքորոշումը պնդելու ունակությունն է: Դիմացիմին համոզելու կարևորագույն միջոցը, որի վրա հենվում է շահագրգռված կողմը իր նպատակին հասնելու համար, փաստարկումն է<sup>1</sup>: Հասարակության զարգացմանը զուգընթաց մարդկանց գիտակցության մեջ օրեցօր ամրապնդվում է այն մտածելակերպը, որ քաղաքական, սոցիալական և ընդհանրապես ամեն տիպի հարցերի լուծման լավագույն եղանակը երկխոսությունը, համոզումն ու հիմնավորումն է, այլ ոչ թե ուժն ու բռնությունը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ Ղարաբաղյան հակամարտությունը դեռևս կարգավորված չէ և այդ ուղղությամբ իրականացվող դիվանագիտական քայլերում (բանակցություններ, հանդիպումներ, գազաթնաժողովներ և այլն) որոշիչ դերակատարում ունեն քաղաքական փաստարկները, որտեղ նրանք դառնում են քաղաքագետ-դիվանագետի հիմնական զենքը, և որոնց «հակամարտության» մեջ էլ, ըստ էության, գտնվում է խնդրի լուծման այս կամ այն տարբերակը<sup>2</sup>:

Հակամարտության խաղաղ և արդար կարգավորման հարցը դրված է ՀՀ արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության ռազմավարության առանցքում, որը ենթադրում է հիմնախնդրի կապակցությամբ ընդունված փաստաթղթերի հանգամանալից ուսումնասիրություն, նոր զարգացումների դիտակետից դրանցում առկա պատմա-իրավական ու քաղաքական փաստարկների վերագնահատում ու վերախմաստավորում:

**Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Մույն հետազոտության օբյեկտը Ղարաբաղյան հիմնախնդրին անմիջականորեն առնչվող բանալի փաստաթղթերի ուսումնասիրությունն ու հետազոտությունն է՝ դրանցում առկա քաղաքական փաստարկների վերհանման ու գնահատման նպատակով: Հետազոտության առարկան՝ Ղարաբաղյան հակամարտությունն է:

**Հետազոտության ժամանակագրական շրջանակները:** Ատենախոսությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1918-1994 թվականները՝ Ղարաբաղյան հիմնախնդրի սկզբնավորումից մինչև 1994 թվականի Բուդապեշտի գազաթնաժողովն ընկած ժամանակահատվածը: Զենարկվող ժամանակահատվածում վերլուծվել են հիմնախնդրի առնչությամբ ընդունված բանալի փաստաթղթերը, ներկայացվել դրանցում առկա քաղաքական փաստարկները և լուսաբանվել դրանց ընդունման քաղաքական շարժառիթները: Քանի որ ատենախոսության առաջին գլուխը նվիրված է էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքական, իրավական և պատմական փաստարկների ներքին կապերին, խնդիրն ավելի ընկալելի դարձնելու նպատակով անդրադարձել ենք նաև հակամարտության կարգավորման կապակցությամբ տարբեր ժամանակներում ընդունված փաստաթղթերի:

**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և եղանակները:** Ատենախոսությունը շարադրված է արխիվային նյութերի, հիմնախնդրով զբաղվող վերլուծաբանների, քաղաքագետների, վերլուծական կենտրոններում հրապարակված ժողովածուների, պարբերական մամուլի ուսումնասիրության հիման վրա: Աշխատանքում կիրառվել են հետազոտման ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդներ:

Հիմնախնդրի ուսումնասիրության հարցում որոշիչ են հատկապես փաստարկման՝ հիմնավորման, համոզման ու համադրման մեթոդները, քանի որ ատենախոսության հիմնական նպատակը փաստաթղթերում առկա փաստարկների բացահայտումն ու ներկայացումն է:

<sup>1</sup> Ըստ Փաստարկման երևանյան դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Գ. Բրուտյանի՝ փաստարկումը կարելի է սահմանել որպես այնպիսի կշռադատություն, որի ընթացքում փորձ է կատարվում համոզել ունկնդրին (լսարանին) առաջադրված դրույթի ճշմարտության և նպատակահարմարության մեջ՝ դարձնելով նրան փաստարկողի համախոհը տվյալ հարցում և նրա առաջադրած թեզի իրականացման համամասնակիցը: Տես՝ Բրուտյան Գ., Փաստարկման էությունն ու բաղադրատարրերը, Եր., 1997, էջ 3-4:

<sup>2</sup> Պայմանավորված այն հանգամանքով, թե փաստարկման ընթացքում որ բնագավառի՝ քաղաքականության, իրավունքի, թե պատմության ընձեռած մեթոդները, տվյալներն ու հասկացությամբ լի ապարատն է օգտագործվում, ըստ այդմ կարող ենք խոսել քաղաքական, իրավական և պատմական փաստարկների մասին:

Պատմահամեմատական մեթոդի օգտագործումը հնարավորություն է տվել բացահայտել ադրբեջանական պատմաբանների կեղծարարությունը՝ սկզբնաղբյուրների հետ նրանց փաստարկների համադրման միջոցով: Մեթոդի կիրառման արդյունքում զուգահեռներ են անցկացվել նմանատիպ այլ հակամարտությունների՝ մասնավորապես Կոսովոյի հիմնահարցի հետ:

Ծագումնաբանական վերլուծությամբ փորձ է կատարվել բացահայտել այն իրական դրդապատճառները, որոնք հիմք են հանդիսացել հակամարտության ծագման համար:

Համակարգային վերլուծության միջոցով հնարավոր է դարձել ամբողջական պատկերացում կազմելու Ղարաբաղյան հիմնախնդրի տարբեր կողմերի վերաբերյալ, այն դիտարկելով իր ամբողջականության մեջ՝ անմիջական և շահագրգիռ կողմերի մոտեցումների ներկայացմամբ:

Նորմատիվային հետազոտությամբ պարզվել է ԱԳՀ-ի, ԱդրԽՍՀ-ի ու ԱՀ-ի, մյուս կողմից՝ ԼՂՀ-ի և նրա նախորդների կազմավորման ու գործունեության իրավաքաղաքական հիմքերը, որոնք կարևոր նշանակություն ունեն նաև նախկին ԱդրԽՍՀ վարչական տարածքում ձևավորված երկու նորանկախ պետությունների՝ հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի ընթացման տեսանկյունից:

Վարքաբանական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել է դարձել Կովկասյան թուրքերի կամ Կովկասյան թաթարների (ներկայիս ադրբեջանցի թուրքերի) քաղաքական վարքը:

Օգտագործվել են նաև քաղաքագիտության ասպարեզում գործող համագիտական այլ մեթոդներ (օրինակ, իվենտ և կոնտենտ անալիզի մեթոդները):

**Ատենախոսության նպատակն ու խնդիրները:** Ատենախոսության նպատակն է՝ Ղարաբաղյան հիմնախնդրի բանալի փաստաթղթերի վերլուծությամբ և նրա շուրջ տեղի ունեցած իրադարձությունների ուսումնասիրությամբ բացահայտել հակամարտության անմիջական կողմերի քաղաքական փաստարկները:

Առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ղարաբաղյան հիմնախնդրի համատեքստում բացահայտել էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքական, իրավական և պատմական փաստարկների ներքին կապերը,

- Ներկայացնել քաղաքական փաստարկների դերը հակամարտությունների կարգավորման գործընթացում,

- Ցույց տալ պատմության և իրավունքի քաղաքականացման դրսևորումները հակամարտությունների կարգավորման գործընթացում,

- Ներկայացնել Ղարաբաղյան հիմնախնդրի մինչխորհրդային ժամանակաշրջանի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, դրանց ընդունման շարժառիթները և բացահայտել դրանցում ադրբեջանական կողմի կեղծարարությունները,

- Վերլուծել Այսրկովկասի խորհրդայնացման ժամանակաշրջանում հիմնախնդրի առնչությամբ ընդունված բանալի փաստաթղթերը և ներկայացնել դրանց քաղաքական ետնախորքը,

- Ներկայացնել Խորհրդային Միության գոյության ժամանակահատվածում ԼՂԻՄ կազմավորման և ԱդրԽՍՀ կազմից նրա դուրս գալու հետ կապված փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները,

- Ներկայացնել Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, որոնք կարևորվում են նաև նախկին ԱդրԽՍՀ տարածքում երկու պետական կազմավորումների ձևավորման իրավական հիմքերի տեսանկյունից,

- Վերլուծել տարբեր երկրների կողմից 1991-1992 թթ. հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի շարժառիթները և ներկայացնել ընդունված փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները,

- Ներկայացնել հակամարտության կարգավորման նպատակով Եվրախորհրդարանի և

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1993թ. ընդունած բանաձևերում առկա քաղաքական փաստարկները,

• Վերլուծել և գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի համատեքստում ներկայացնել 1994 թվականին հրադադարի կնքման և նրա ամրապնդման կապակցությամբ ընդունված փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները:

**Հիմնախնդրի աղբյուրագիտական հիմքը և գիտական մշակվածության աստիճանը:** Քանի որ ատենախոսության հիմքում ընկած են հիմնախնդրի բանալի փաստաթղթերի վերլուծությունը, դրանցում առկա քաղաքական փաստարկների բացահայտումն ու ներկայացումը, աշխատանքի համար գլխավորապես աղբյուրագիտական հիմք են հանդիսացել այն սկզբնաղբյուրները, որոնցում տեղ են գտել նշված փաստաթղթերը: Այդ շրջանակներում՝ թույլատրելիի սահմաններում օգտագործված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պետական արխիվի<sup>1</sup>, ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվի<sup>2</sup>, Հայաստանի Հանրապետությունում ԼՂՀ մշտական ներկայացուցչության ընթացիկ արխիվի<sup>3</sup>, ՀՀ Պատմության Պետական Կենտրոնական<sup>4</sup> և Ռուսաստանի Պետական սոցիալ-քաղաքական պատմության արխիվների նյութերը<sup>5</sup>:

Ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող փաստաթղթերի զգալի մասը հրապարակվել են Յու. Բարսեղովի, Վ. Թովմասյանի, Ա. Մանասյանի աշխատություններում, «Լեռնային Ղարաբաղը 1918-1923 թթ.: Փաստաթղթերի և նյութերի հավաքածու», «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը իրավաքաղաքական փաստաթղթերում», «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի կազմավորման պատմությունից» ժողովածուներում և «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում<sup>6</sup>:

Ի լրումն դրա, օգտվել ենք նաև համացանցային արխիվներից: Ներկայումս բոլոր պաշտոնական կայքէջերն ունեն արխիվային բաժին, որոնք հասանելի են օգտագործման համար: Աշխատանքում օգտագործված են միջազգային կազմակերպությունների, պետական և քաղաքական գործիչների կայքէջերում և լրատվական գործակալություններում տեղադրված պաշտոնական փաստաթղթեր, որոշումներ, բանաձևեր, հոդվածներ, հայտարարություններ<sup>7</sup>:

<sup>1</sup> ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 332, ք. 10-11:

<sup>2</sup> ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, 1994թ. բանակցային ֆոնդ, թղթապանակ N 16, փաստաթուղթ 2; ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, թղթապանակ N 103, փաստաթուղթ 48; ԼՂՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, թղթապանակ N 109, փաստաթուղթ 47; Архив МИД НКР, папка № 10, СБСЕ 1994г.

<sup>3</sup> ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչության ընթացիկ արխիվ, 1991թ. բանակցային ֆոնդ:

<sup>4</sup> ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 276 գ.1, գ. 42, ք. 159; ШГИА Армении, ф. 57, оп. 5, д. 202, лл. 3-4 и об. Копия; ШГИА Армении, ф. 200, оп. 1, д. 235, лл. 12 об. - 13 и об. Автограф; ШГИА Армении, ф. 200, оп. 1, д. 243, л. 101. ШГИА Армении, ф. 200, оп. 1, д. 244, л. 2; ШГИА Армении, ф. 200, оп. 1. д. 581, л. 98. Отпуск. Машинопись; ШГИА Армении, ф. 200, оп. 1, д. 581, л. 262.

<sup>5</sup> РГАСПИ, ф. 5, оп. 1, д. 2203, л. 43. Копия; РГАСПИ, ф. 17, оп. 13, д. 384, л. 67, Копия; РГАСПИ, ф. 64, оп. 1, д. 1. л. 124. Копия; РГАСПИ, ф. 558, оп. 1, д. 3318, лл. 1-2. Копия.

<sup>6</sup> Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий. В 2 т., М., "КРУГЪ", т. 1, 2008; Թովմասյան Վ., Աբաջանյան Վ., Ներսիսյան Յու., Ղարաբաղյան հարց, (սկունքներն ու էությունը ըստ փաստաթղթերի և փաստերի), Ստեփանակերտ, «Միաշտոց», 1991; Манасян А., Карабахский конфликт: международно признанные основания проблемы, (папка основных и политических документов), Степанакерт, "АрГУ", 2007; Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов. Отв. ред. В. Микаелян, АН Армении, Ин-т Истории, Ер., АН Армении, 1992; Статус Нагорного Карабаха в политико-правовых документах. // Библиотека центра русско-армянских инициатив, Ер., 1995; К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы / под редакцией доктора исторических наук Д. П. Гулиева, Баку, "Азернешр", 1989; «Вестник архивов Армении», № 3, 1967г., № 1, 1989г., № 2, 1989г.

<sup>7</sup> <http://www.un.org> - Միավորված ազգերի կազմակերպության կայք, [www.osce.org](http://www.osce.org) - Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության կայք, <http://vn.kazimirov.ru> - Վ. Կազիմիրովի անձնական կայք, <http://kremlin.ru/> - ՌԳ նախագահի պաշտոնական կայք, [www.nkr.am](http://www.nkr.am) - ԼՂՀ ԱԳՆ կայք, <http://www.armeniaforeignministry.am> - ՀՀ ԱԳՆ կայք, [www.mfa.gov.az](http://www.mfa.gov.az) - ԱՀ ԱԳՆ կայք, <http://www.whitehouse.gov> - սպիտակ տան պաշտոնական կայք, <http://aliyevheritage.org> - ԱՀ նախկին նախագահ Հ. Ալիևի կայք, <http://www.ejil.org> - միջազգային իրավունքի եվրոպական ամսագրի կայք, <http://www.presidency.ucsb.edu> - Ամերիկյան բյուրոյի նախագծի կայք, [www.azconsulatela.org](http://www.azconsulatela.org) - Լոս-Անջելեսում ԱՀ գլխավոր հյուպատոսության կայք, [www.azembassy.nl](http://www.azembassy.nl) - Նիդեռլանդներում ԱՀ դեսպանության կայք, <http://en.apa.az> - ադրբեջանական անկախ լրատվական գործակալություն, <http://jvatnews.ru> - ռուսական վերլուծական լրատվական կայք, <http://medialab.am> - Բաց Հասարակություն հիմնադրամի լրատվական կայք, <http://minval.az>, <http://novostink.ru>, <http://operativ.am>, <http://www.amedia.am>, <http://www.epress.am>, <http://www.mediamax.am>, <http://www.mtholyoke.edu>, <http://www.noravank.am>, <http://www.regnum.ru>, <http://www.times.am>, <http://www.x-libri.ru>, <http://yerevantimes.am>, [www.panorama.am](http://www.panorama.am), ИА REGNUM, Neus.am, Versia.am, Dezaz.info, Tert.am լրատվական և վերլուծական գործակալություններ:

Հակամարտության կարգավորման գործընթացը եղել և շարունակում է մնալ ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում: Սակայն մինչ օրս հիմնախնդրի բանալի փաստաթղթերի համապարփակ վերլուծությանը և դրանցում առկա քաղաքական փաստարկների ուսումնասիրությանն ու բացահայտմանը նվիրված ամբողջական աշխատանք չկա: Ատենախոսության թեմայի շրջանակներում ներառված խնդիրների ուսումնասիրությանն այս կամ այն կերպ՝ ուղղակի կամ անուղղակի անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, տեսաբաններ, քաղաքագետներ: Դրանցից հարկ է առանձնացնել Յու. Բարսեղովի, Ա. Մանասյանի, Հ. Քոթանջյանի, Ա. Այվազյանի, Տ. Բալայանի, Խ. Գալստյանի, Թ. Հակոբյանի, Ա. Պապյանի, Շ. Աբրահամյանի, Ս. Շաքարյանի, Ա. Վարիբջանյանի, Ս. Սաֆարյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նիկողոսյանի, Գ. Բրուտյանի, Շ. Ավագյանի, Գ. Մախմուրյանի, Ս. Տարասովի, Ա. Պանարինի, Գ. Թավադովի, Ա. Թոյնիսի, Կ. Յասպերսի, Ջ. Իոաննիդիսի աշխատությունները, ժողովածուներն ու թեմային առնչվող հոդվածները<sup>8</sup>:

Ադրբեջանական կողմի տեսակետներին ծանոթանալու, դիրքորոշումը պարզաբանելու և իրավաքաղաքական փաստարկներն ուսումնասիրելու նպատակով օգտագործել ենք Ա. Ալեքսանդրովի, Ա. Ալիևի, Ի. Ալիևի, Ջ. Բունիաթովի, Է. Իսմայիլովի, Ա. Հասանովի, Գ. Գուլիևի, Ի. Մամմադովի, Ֆ. Մամեդովայի, Վ. Փիրիևի, Ջ. Հասանլի, Թ. Մուսաևի գրքերն ու հոդվածները և «Ղարաբաղյան հակամարտություն. ադրբեջանական հայացք», «Կոնֆլիկտները Լեռնային Ղարաբաղում» ժողովածուները<sup>9</sup>:

<sup>8</sup> Բարսեղով Յու., Ինքնորոշման իրավունքը ազգամիջյան պրոբլեմների դեմոկրատական լուծման հիմքն է, Եր., «Հայաստան», 1990; Барсегов Ю., Культ аннексии: Междунар. право на рубеже тысячелетий, М., "Готика", 1997; Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике, Комментарии к документам. Т. 2, отв. ред. А. О. Меликян, М., «Мелихово», 2009; Մանասյան Ա., Ղարաբաղյան ազատամարտը հայոց քաղաքական գիտակցության հայելում, Եր., «Գասպրիմո», 2003; Մանասյան Ա., Ղարաբաղյան հակամարտություն. իրավաքաղաքական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ, Եր., «Տիգրան Մեծ», 2008; Մանասյան Ա., Ղարաբաղյան հիմնախնդիր. փաստարկներ և փաստաթղթեր /փորձագիտական հայացք/, Եր., «Գասպրիմո», 2005; Манасян А., Карабахский конфликт: ракурсы правового подхода, Ер., "Амарас", 1998; Манасян А., Карабахский конфликт, ключевые понятия и хроника, Ер., "Нораванк", 2005; Քոթանջյան Հ., Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2009; Քոթանջյան Հ., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, «Տիգրան Մեծ», 2010; Այվազյան Ա., Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, Քննական տեսություն, Եր., «Արտագեր», 1998; Այվազյան Ա., Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, (մասն առաջին), Եր., «Հեղինակային հրատարակչություն», 2003; Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Եր., «Գասպրիմո», 2004; Գալստյան Խ., Քաղաքական բանակցություններ. տեսություն և պրակտիկա, Եր., «Վան Արյան», 2007; Հակոբյան Թ., Կանաչ ու սև, Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, «Հեղինակային հրատարակչություն», 2008; Պապյան Ա., Հայրենատիրություն, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, Եր., «Ատոլի», 2012; Աբրահամյան Շ., Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին, Եր., «Հայաստան», 2003; Աբրահամյան Շ., Աբրահամյան Ա., Էթնոքաղաքական հակամարտություններ (ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման ուղիները), Ստեփանակերտ, ԱրՊՀ, 2011; Շաքարյանց Ս., Ռուսաստանի Դաշնության քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման գործում, Հայաստան 2020, զարգացման և անվտանգության ռազմավարություն, ՌԱՀՀԿ, Եր., «Տիգրան Մեծ», 2002; Վարիբջանյան Ա., «Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Փարիզի վեհաժողովում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկան, անցյալը և ապագան» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., ԵՊՀ, 2006թ.: Սաֆարյան Ս., Հակամարտությունների սիմետրիկ և ասիմետրիկ լուծումներ (Լեռնային Ղարաբաղի օրինակով), Հայաստանը փոխակերպվող աշխարհում, Եր., ՌԱՀՀԿ, 2006; Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա. և այլոք, Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Եր., ՀՅԴ, 2007; Նիկողոսյան Հ., ՄԱԿ-ի ԱԽ չորս բանաձևերը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, Նոր մոտեցումներ ԼՂՀ հիմնահարցին, գիտաժողովի նյութեր, 8 սեպտեմբերի 2011, Եր., «Լինգվա», 2012; Բրուտյան Գ., Փաստարկման էությունն ու քաղաքատարրերը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 1997; Авакян Ш., Нагорный Карабах. правовые аспекты, Ер., "Тигран Метс", 2014; Махмуриян Г., Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., "Артагерс", 1999; Тарасов С., Мифы о карабахском конфликте. Сборник статей, М., "Книжный Мир", 2012; Панарин А., Политология, М., "Проспект", 1999; Тавалов Г., Этнология, "Проект", М., 2002; Тойнби А., Цивилизация перед судом истории. Сборник / Пер. с англ. 2-е изд., М., "Айрис-пресс", 2003; Ясперс К., Смысл и назначение истории/ Пер. с нем. 2-е изд., М., "Республика", 1994; Ioannidis J., Why Most Published Research Findings are False. Plos Medicins. 2005. v. 2, N 8.

<sup>9</sup> Алекперов А., Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, "Елм", 1960; Алиев А., Григорян С., Мусабеков Р., Навасардян Б., Карабахский конфликт: понять друг друга, Ер., "Вэлс-принт", 2006; Алиев И., Нагорный Карабах: история, факты, события. / АН Аз.ССР, Ин-истории, Баку, "Елм," 1989; Алиев И., О роли и значении иранского элемента в истории Кавказской Албании// III Всесоюзная конференция "Искусство и археология Ирана и его связь с искусством народов СССР с древнейших времен", М., "Наука", 1979; Буниатов З., (ред.) Сборник. История Азербайджана по документам и публикациям, Баку, "Элм", 1990; Исмаилов Э., Очерки по истории Азербайджана, Баку, "Флинта", 2010; Гасанов А., (автор идей и составитель) Карабах обсуждается: Баку, Общество Гуманитарных Исследований, Ресурсы Примирения, 2006; К истории образования Нагорно-Карабахской автономной

Հետաքրքիր տեղեկություններ կան բանակցությունների և հակամարտության կարգավորման նպատակով կազմակերպված հանդիպումների մասնակիցների ու հիմնախնդրով զբաղվող մասնագետների՝ Ս. Չոլյանի, Վ. Ստուպիշինի, Վ. Կազիմիրովի, Ա. Աբասովի, Թ. դե Վաալի, Ռ. Չարգարյանի, Վ. Կրիվոպոլսկովի, Ա. Մելիք-Շախնազարովի, Ս. Սարգսյանի, Ջ. Մարեսկայի աշխատություններում, զեկույցներում և հոդվածներում<sup>10</sup>:

Աշխատանքում ուսումնասիրել և օգտագործել ենք «Ազգագրական հանդես», «Անալիտիկոն», «Դրօշակ», «Հանրապետական», «ՎԷՄ», «Օրենք և իրականություն», «21-րդ ԴԱԲ», "Аналитические Записки", "Вестник архивов Армении", "Дипломатический Вестник", "Мегаполис-Экспресс", "Международная жизнь", "Новое Время", "Центральная Азия и Кавказ" ամսագրերում, հանդեսներում և տեղեկագրերում թեմային առնչվող հոդվածները, զեկույցներն ու փաստաթղթերը<sup>11</sup>:

Ատենախոսությունում օգտագործված են նաև ՋԼՄ-ների նյութերը՝ առաջին հերթին պարբերական մամուլը, որոնցում տեղ են գտել հիմնախնդրի առնչությամբ ընդունված փաստաթղթերը: Միաժամանակ դրանք թույլ են տալիս տեղեկատվություն ստանալ միջազգային կազմակերպությունների՝ Գարաբաղյան հակամարտությանը վերաբերող գործունեության, ընթացիկ կարգավորման հարցերի, Հայաստան-ԼՂՀ-Ադրբեյջան հարաբերությունների և քաղաքական իրադարձությունների մասին: Մասնավորապես օգտագործված են «Ազգ», «Ազատ Արցախ», «Առավոտ», «Դեմո», «Երկիր», «Իրավունք», «Լեռնային Գարաբաղի Հանրապետություն», «Խորհրդային Հայաստան», «Խորհրդային Գարաբաղ», «Կոմունիստ», «Հայաստանի Հանրապետություն», "Бакинец", "Бакинский рабочий", "Борьба", "Голос Армении", "Зеркало", "Знамя труда", "Известия", "Коммунист", "Красная звезда", "Независимая Газета",

области Азербайджанской ССР. 1918-1925: Документы и материалы / под редакцией доктора исторических наук Д. Гулиева, Баку, "Азернешр", 1989; Маммадов И., Мусаев Т., Армяно-азербайджанский конфликт: история, право, посредничество, 2-е изд., Тула, Гриф и К, 2007; Мамедова Ф., Истина о Карабахской проблеме, журнал «Азербайджан и азербайджанцы», N 7-8, Баку, 2001; Пириев В., Карабах в составе государств Хулагуидов и Джалаиридов (XIII-XVI вв.), Карабах: История в контексте конфликта / сост. К. Шукюрюв, Т. Багиев, с. 113-127, Санкт-Петербург, "Вестник", 2014; Гасанлы Д., Нагорный Карабах: старые заблуждения в новой интерпретации, <http://www.regnum.ru/news/1428880.html>; Мусаев Т., Правовые аспекты Нагорно-Карабахского конфликта. [www.mfa.gov.az](http://www.mfa.gov.az); Карабахский конфликт: азербайджанский взгляд: Сборник, М., "Европа", 2006; Конфликты в Нагорном Карабахе, Сборник статей, Баку, "Азернешр", 1990.

<sup>10</sup> Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт, Ер., "Лингва", 2001; Ступишин В., Моя миссия в Армению. 1992-1994. Воспоминания первого посла России. М., "Academia", 2001; Ступишин В., Карабахский конфликт 1992-1994 / Армянская община Москвы, (Отв. ред. С. Григорян), М., "Москва", 1998; Казмиров В., Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, М., "Междунар. отношения", 2009; Абасов А., Хачатрян А., Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность, 2-е изд., испр. и доп., М., "Междунар. отношения", 2004; Ваал де Т., Черный сад. Армения и Азербайджан между миром и войной. Пер. с англ. Томас де Ваал, М., "Текст", 2005; Заргарян Р., Доктрина геополитики современно восточно-средиземноморской цивилизации: Турецкая угроза восточно-средиземноморской цивилизации, СПб., "Алетейа", 2004; Кривоусков В., Мятёжный Карабах. Из дневника офицера МВД СССР, изд. 2-е доп., М., "Голос-Пресс", 2007; Мелик-Шахназаров А., Нагорный Карабах: факты против лжи. Информационно-идеологические аспекты нагорно-карабахского конфликта, М., "Волшебный фонарь", 2009; Саркисян М., Нагорный Карабах: Война и политика (1990-93 гг.). Война в Нагорном Карабахе и внутренний конфликт в армянском обществе, Ер., Арм. центр стратег. и нац. исслед., 2010; Maresca, J., The international community and the conflict over Nagorno-Karabakh. In B. W. Jentleson (Ed.), Opportunities missed, opportunities seized: preventive diplomacy in the post-cold war world (pp. 68-91). Lanham, MD: Rowman & Littlefield Publishers, 1995.

<sup>11</sup> «Ազգագրական հանդես», Վիրիտուլ Ռ., Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, N 5, 1895; «Անալիտիկոն», N 8/օգոստոս, 2009, Մայիլյան Ա., Ծանաչված ու չճանաչված պետություններ. փոխհարաբերությունների բանաձևը, N 3 (39), մարտ, 2012; «Դրօշակ», Մանասյան Ա., Գարաբաղյան հակամարտությունը իրավական և քաղաքական փաստաթղթերի դիտակետից, թիվ 9-10, 2008; «Հանրապետական», Հայաստանի Հանրապետական կուսակցություն, Մանուկյան Ա., Պատմությունը որպես զենք, թիվ 7 (71), 2009, Երկրորդ աշխարհամարտ. Պատմության քաղաքականացում, թիվ 8 (72), 2009; «ՎԷՄ», Գոգոյան Է., «Գարաբաղյան հիմնահարցը և Ադրբեյջանը, Ազգերի լիզայի արխիվի (Ժնև, Շվեյցարիա) փաստաթղթերում», հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (39), 2012; «Օրենք և իրականություն», Խելոյան Ա., «Սերի դաշնագիրը և պետությունների միջազգային իրավական պատասխանատվությունը», N 10, հոկտեմբեր, 2007; «21-րդ ԴԱԲ», Բաբայան Գ., Կարմիր Զրդատան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, թիվ 4 (10), 2005; Արեշև Ա., Չճանաչված պետություններ. Հակամարտությունների կարգավորման ռազմավարության որոնումներ, թիվ 3 (17), 2007; "Аналитические Записки", Казмиров В., Альтернативы урегулирования карабахского конфликта, N 1 (3), 2004; "Мегаполис-Экспресс", Касумов Р., Что принесла война Азербайджану. 23 февраля 1994г.; "Международная жизнь", Казмиров В., Карабах. Как это было?/N 5, 1996; "Новое Время", Козырев А., Российское миротворчество: легких решений не бывает, N 4, 1994; "Центральная Азия и Кавказ", Балаян Т., Карабахский конфликт: перемирие на долгосрочную перспективу, N 5 (29) 2003.

"Правда", "Советский Карабах", "Gazeta Wyborcza" օրաթերթերն ու շաբաթաթերթերը<sup>12</sup>:

**Գիտական նորույթ:** Ատենախոսության շրջանակներում բացահայտվել են էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքական, իրավական և պատմական փաստարկների ներքին կապերը, վերլուծվել Ղարաբաղյան հիմնախնդրի ծագումից մինչև 1994թ. Բուդապեշտի գագաթնաժողովն ընկած ժամանակահատվածում ընդունված բանալի փաստաթղթերը՝ դրանցում առկա քաղաքական փաստարկների վերհանման նպատակով:

Ըստ այդմ՝ արձանագրել ենք գիտական նորույթ պարունակող հետևյալ արդյունքները.

- Ղարաբաղյան հակամարտության համատեքստում ներկայացրել ենք քաղաքական, իրավական և պատմական փաստարկների՝ յուրօրինակ եռամիասնության ներքին կապերը:

- Յույց ենք տվել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում պատմության քաղաքականացման դրսևորումները:

- Համակողմանի ներկայացրել ենք քաղաքական փաստարկների դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, ցույց տվել, որ դրանք վճռորոշ դերակատարություն են ունեցել ինչպես հիմնախնդրի ծագման այնպես էլ հետագա շրջանում, այդ թվում՝ նոր կազմավորված պետությունների ճանաչման համատեքստում:

- Նորովի վերլուծել և ներկայացրել ենք հիմնախնդրի մինչխորհրդային շրջանի բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, որոնք թույլ են տալիս հիմնավորապես քողագերծելու ադրբեջանական կողմի այն կեղծարարությունը, թե իբր Լեռնային Ղարաբաղը գտնվել է 1918թ. պատմական ասպարեզում հայտնված և երկու տարի էլ չգոյատևած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության ենթակայության տակ:

- Ներկայացրել ենք Այսրկովկասի խորհրդայնացման ժամանակաշրջանում ընդունված բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, որոնք նաև բացահայտում են տվյալ շրջանում հիմնախնդրի ոչ հայանպաստ որոշումների իրական դրդապատճառները:

- Նորովի ենք վերլուծել և ներկայացրել 1923-1989 թթ. հիմնախնդրին առնչվող փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, որոնք ցույց են տալիս, որ ԼՂԻՄ-ը ԱդրԽՍՀ վարչական սահմաններ է մտցվել և նրա ենթակայությունից դե-ֆակտո դուրս է բերվել դեռևս ԽՍՀՄ գոյության ժամանակահատվածում:

- Վերլուծել և նորովի ենք ներկայացրել Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների կազմավորման փաստաթղթերում առկա իրավաքաղաքական փաստարկները, որոնք ցույց են տալիս, որ ԼՂՀ անկախության հռչակման և պետականության կերտման հիմքերը բոլոր առումներով ավելի զորեղ են, ավելի օրինական, քան Ադրբեջանական պետականության ստեղծման հիմքերը:

- 1991-1992 թթ. հակամարտության կարգավորմանն առնչվող բանալի փաստաթղթերի վերլուծությամբ պարզաբանել և ժխտել ենք տարածված այն տեսակետը, ըստ որի, իբր Արևմտյան երկրները ճանաչելով նախկին Խորհրդային Միության միութենական հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են նրանց սահմանների անձեռնմխելիությունը: Իսկ Արևմուտքի առաջնորդող ԱՄՆ-ի 1992թ. ընդունած Ազատության աջակցման ակտի 907-րդ՝

<sup>12</sup> «Ազգ», 12 մայիսի 1994թ., 30 հունիսի 1994թ., 22 մայիսի 2007թ., 28 հունիսի 2007թ., 14 հուլիսի 2009թ.; «Ազատ Արցախ» (Ստեփանակերտ, ԼՂՀ), 7 հուլիսի 2001թ.; «Առավոտ», 30 ապրիլի 2002թ.; «Դեմո» (Ստեփանակերտ, ԼՂՀ), 31 մայիսի 2008թ.; «Երկիր», 5 մայիսի 1993թ., 10 դեկտեմբերի 1994թ.; «Իրավունք», 3-9 փետրվարի 2006թ.; «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», 14 դեկտեմբերի 1994թ.; «Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի 1989թ.; «Խորհրդային Ղարաբաղ», 10 օգոստոսի 1927թ., 2 նոյեմբերի 1989թ., 24 մարտի 1991թ.; «Կոմունիստ» (Երևան, հայերեն), 7 դեկտեմբերի 1920թ.; «Հայաստանի Հանրապետություն», 3 դեկտեմբերի 2010թ.; "Бакинец" (Баку), 27 февраля 1994г.; "Бакинский рабочий" (Баку), 9 июля 1923г., 1 августа 1923г., 14 июня 1988г., 3 сентября 1991г., 7 ноября 1991г., 23 января 1998г., 12 ноября 1999г., 24 января 2001г.; "Борьба" (Москва), 21 марта 1919г.; "Голос Армении", 17 июля 2010г.; "Зеркало" (Баку), 23 июля 2003г.; "Знамя труда" (Москва), 26 августа 1919г.; "Известия" (Москва), 30 ноября 1989г., 11 января 1990г., 6 апреля 1990г.; "Коммунист" (Баку), 2 декабря 1920г., 23 ноября 1989г.; "Коммунист" (Москва), 29 марта 1988г.; "Красная звезда" (Москва), 11-17 октября, 2013г.; "Независимая Газета" (Москва), 2 марта 1994г., 24 май 1994г.; "Правда" (Москва), 4 декабря 1920г., 12 января 1989г., 15 января 1989г.; "Советский Карабах" (Степанакерт), 21 февраля 1988г., 25 май 1991г., 26 сентября 1991г.; "Gazeta Wyborcza" (Польша), 11 sentabra 2008.



«Աղբբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» բանաձևով ԱՀ-ն, փաստորեն, ճանաչվել է ազրեսոր:

- Նորովի վերլուծել և ներկայացրել ենք 1993 թվականին Եվրախորհրդարանի և ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերում առկա քաղաքական փաստարկները, որոնք հստակորեն բացահայտում են Բաքվի կողմից իրականությունը կեղծելու միտումնավորությունն ու շարժառիթները:

- Վերլուծել և գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի պարզաբանման համատեքստում ներկայացրել ենք 1994 թվականին հրադարարի կնքման և նրա ամրապնդման կապակցությամբ ընդունված փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները, որոնք վկայում են, որ թե՛ աղբբեջանական կողմը, թե՛ միջազգային հանրությունը՝ ի դեմս ԵԱՀԿ Բուդապեշտի գազաթնաժողովի մասնակից 52 պետությունների, Լեռնային Ղարաբաղը ճանաչել են որպես հակամարտության և բանակցային գործընթացի լիիրավ կողմ:

**Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:** Ատենախոսության տեսական, գիտագործնական, պատմաճանաչողական նշանակությունն այն է, որ փաստաթղթերի վերլուծության արդյունքում ներկայացված քաղաքական փաստարկները, եզրահանգումներն ու մեկնաբանությունները կարող են օգտագործվել ԲՈՒՀ-երում՝ քաղաքագիտության, հայոց պատմության, միջազգային հարաբերությունների, Արցախի պատմության, Ղարաբաղյան հակամարտության դասընթացների, հակամարտությունների տեսության հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող փորձագետների, անվտանգության հարցերով զբաղվող մասնագետների, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը անմիջականորեն զբաղվող մասնագետների՝ բանակցային գործընթացում ներգրավված դիվանագետների, ժողովրդական դիվանագիտության ձևաչափերում ընդգրկված հասարակական գործիչների ու փորձագետների կողմից:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդի 2008 թվականի ապրիլի 4-ի նիստում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Արցախի պետական համալսարանի և Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրապարակած «Բանբեր Հայագիտության», «21-րդ դար», «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», «Լրատու» ամսագրերում, Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին (Երևան, պրակ 4, 2013թ.), և ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին (Ստեփանակերտ, 13-15 նոյեմբերի, պրակ 1, 2009թ.) նվիրված Միջազգային գիտաժողովների նյութերում:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք պարունակում են տասը ենթագլուխներ, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից: Ընդհանուր ծավալը կազմում է 170 էջ՝ առանց գրականության ցանկի և հավելվածի:

**Ատենախոսության համառոտ բովանդակությունը:** Ներածությունն ըստ էության ատենախոսության մանրակերտն է, որտեղ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, նշվում են հետազոտության ժամանակագրական շրջանակներն ու մեթոդաբանական առանձնահատկությունները, ձևակերպված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, բնութագրվում է խնդրի գիտական մշակվածության աստիճանը և աղբբյուրագիտական հիմքը, ներկայացվում են ատենախոսության գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ «Քաղաքական, իրավական և պատմական փաստարկների ներքին կապը էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում» բաղկացած է երեք ենթագլուխներից: «Քաղաքական փաստարկների դերը հակամարտությունների կարգավորման գործընթացում» վերնագրված առաջին ենթագլխում հիմնավորվում է, որ քաղաքական փաստարկները ունեցել և շարունակում են որոշիչ դերակատարություն ունենալ էթնոքաղաքական հակամարտությունների՝ այդ թվում նաև Ղարաբաղյան հիմնախնդրի ծագման, ծավալման ու կարգավորման գործընթացում: Բանալի իրավաքաղաքական փաստաթղթերում առկա

քաղաքական փաստարկների իմացությունն անհրաժեշտ, իսկ գործնական կիրառությունը կարևոր նախապայման են հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցություններում իրավական ու քաղաքական առումներով խնդիրը՝ իր բովանդակությանը համարժեք ներկայացնելու համար, որտեղ նրանք դառնում են քաղաքագետ-դիվանագետի հիմնական զենքը:

Ընդգծվում է, որ միջազգային հանրության և առաջին հերթին այդ հանրությունը ներկայացնող գերատերությունների կողմից ինքնահռչակված պետությունների ճանաչումն ամենից առաջ կախված է քաղաքական նպատակահարմարությունից կամ իրենց շահերի աստիճանակարգում նոր պետությունների ունեցած տեղից ու տարածաշրջանում սեփական ծրագրերի իրականացման հնարավոր դերից: Քանի որ քաղաքականությունն այնպիսի գործունեություն է, որի արդյունքները երբեմն անորոշ են, քաղաքական փաստարկները հանդես են գալիս որպես ազդեցություն գործելու, համոզելու և նպատակին հասնելու վճռորոշ գործիքներ: Դրանց ճիշտ օգտագործումը միջազգային հանրության ընկալումներում կարող են փոխել հիմնախնդրի կերպարը և ազդել միջնորդների դիրքորոշումների վրա:

Երկրորդ՝ **«Քաղաքական ու իրավական փաստարկների ներքին կապը և հիմնախնդրի իրավական փաստարկների քաղաքականացման դրսևորումները»** ենթագլխում անդրադարձել ենք քաղաքականության և իրավունքի փոխհարաբերություններին, ներկայացրել իրավունքի՝ որպես միջպետական հարաբերությունների կարգավորման հիմնական գործիքներից մեկի կարևորությունը:

Սակայն հակամարտությունների կարգավորմանն ուղղված գործընթացում քաղաքականության և իրավունքի փոխադարձ կապերն առավելապես դրսևորվում են անուղղակի ձևերով: Հիմնախնդիրը, որի նկատմամբ պետությունն անտարբեր չէ, սովորաբար քաղաքականացվում և մեկնաբանվում է սեփական շահերից ելնելով, բայց իրավական ձևակերպման քողի ներքո: Թերևս դրանցից ամենատարածվածը քաղաքական գործիչների կողմից իրավական սկզբունքների տարաբնույթ մեկնաբանություններն ու ձևակերպումներն են: Դա է պատճառը, որ չկա որևէ էթնոքաղաքական կոնֆլիկտ, որտեղ հակամարտող կողմերը միջազգային հանրությանն իրավական «հագուստով» չներկայացնեն իրենց դիրքորոշումը: Հակամարտության կարգավորմամբ զբաղվող ԵԱՀԿ ՄԽ համանախագահները ևս, հիմնախնդրի մասին իրենց տեսակետները ձևակերպում են իրավունքի լեզվով և իրենց առաջարկություններում խոսում են իրավունքի՝ մասնավորապես միջազգային իրավունքի անունից: Այսինքն՝ ներկայումս առավելապես միջազգային իրավունքն է տրամադրում հակամարտությունների կարգավորման լեզուն: Մյուս կողմից՝ ինչպես նշվել է, ակնհայտ է նաև, որ նրանց կարգավորումը որպես կանոն վարպետորեն քաղաքականացվում է: Արդյունքում, քաղաքական շարժառիթները «թաքնվում են» իրավունքի՝ հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունների տակ՝ փակուղի տանելով հակամարտության կարգավորման գործընթացը: Դա նկատելի է նաև մեր դեպքում: Թե՛ միջնորդները, թե՛ հակամարտության կողմերը չեն խուսափում միջազգային իրավունքին կատարվող հղումներից: Տվյալ պարագայում հայկական կողմերի խնդիրը միջազգային իրավունքի՝ հակամարտության կարգավորման ներբերվող սկզբունքները կեղծ մեկնաբանություններից ազատելը, դրանք իրենց իրական բովանդակությամբ ներկայացնելն ու կիրառելը պիտի լինի:

Ենթագլխում ներկայացվում է նաև հիմնախնդրի իրավական փաստարկների նվազագույն փաթեթը:

**«Պատմության քաղաքականացման դրսևորումները հակամարտությունների կարգավորման գործընթացում»** վերնագրված երրորդ ենթագլխում հիմնավորվում է, որ պատմությունը ոչ միայն անցյալը վերարժևորելու միջոց է, այլև յուրաքանչյուր պետության ինքնության դրսևորման ու քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետ ու հաճախ օգտագործվող քաղաքական զենք: Դա է պատճառը, որ բոլոր ժողովուրդներն իրենց մատաղ սերնդին դաստիարակելու համար դիմում են պատմությանը, իսկ պատմություն չունեցող ժողովուրդների մտավորականները հետին թվով ստեղծում են այն:

ԱՀ-ում ևս շարունակաբար քաղաքական բնույթի կեղծ պատմություններ են հորինվում: Հանդես գալով որպես Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) իրավահաջորդ, նրանք փորձում են տպավորություն ստեղծել, որ ներկայիս պետականությունն ունի մեկդարյա պատմություն, որ Ղարաբաղն իրենցն է եղել: Կեղծարարության քարոզչությունը տարվում է այն բանի հաշվառումով, որ ոչ բոլորին է հայտնի կամ ձեռնառու Այսրկովկասի իրական պատմությունը:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվող միջնորդների պահվածքի հակասականությունը, ովքեր մի կողմից «հորդորում են» չխորանալ պատմության մեջ, բայց մյուս կողմից՝ իրենք են կարգավորման գործընթաց բերում պատմությունը, միայն ապացուցում են տարածաշրջանի ժողովուրդների համար նրա այժմեականությունն ու կարևորությունը: Պատմության քաղաքականացումն է պատճառը, որ միջնորդները հիմնախնդրի կարգավորման համար որպես սկզբնակետ առաջարկում են 1988թ., այլ ոչ թե 1920 թվականը, կամ պատմականորեն ամենավերջին տարեթիվը՝ 1994-ը, երբ ԱՀ-ը պարտություն կրելով իր սանձազերծած պատերազմում, հրադադար խնդրեց՝ ճանաչելով ԼՂՀ փաստացի անկախությունը:

Ընդհանրապես հնարավոր չէ հանդես գալ որևէ հակամարտության կարգավորման առաջարկով, առանց իմանալու նրա պատճառները, իսկ դրանք «թաքնված» են պատմության մեջ: Փաստորեն, պատմությունն ինչպես էլ շրջվի, միևնույն է ներկա է հակամարտությունների՝ այդ թվում նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում: Հարցը նրանումն է, թե ինչպես վարվել՝ պատմական փաստարկներն առավել կոռեկտ ու արդյունավետ օգտագործելու համար:

Ատենախոսության երկրորդ գլուխը կրում է **«Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի բանալի փաստաթղթերում»** վերնագիրը և բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցում վերլուծված են հակամարտության սկզբից (1918թ.) մինչև նախկին ԱդրԽՍՀ տարածքում երկու պետությունների՝ ԱՀ-ի և ԼՂՀ-ի ձևավորման շրջանը (1991թ.) հիմնախնդրին առնչվող կարևորագույն փաստաթղթերը՝ ներկայացնելով դրանց տեքստում և ենթատեքստում առկա քաղաքական փաստարկները:

**«Քաղաքական փաստարկները հիմնախնդրի մինչխորհրդային շրջանի փաստաթղթերում»** վերնագիրը կրող առաջին ենթագլխում ներկայացված փաստաթղթերի վերլուծությունը հստակորեն ցույց են տալիս հակամարտության ծագման և ծավալման շարժընթացը, հանգամանք, որը կարևոր նախապայման է հիմնախնդիրը իր էությանը համարժեք ըմբռնելու և նրա արդարացի լուծումը գտնելու համար:

Հայտարարելով Լեռնային Ղարաբաղը ԱԴՀ-ին պատկանելու մասին, ադրբեջանական կողմը սովորաբար որպես հիմնավորում մատնանշում է երկու փաստ՝ անգլիական գեներալ Թոմսոնի 1919թ. փետրվարի 24-ի «որոշումը», որով նա երկրամասի գեներալ-նահանգապետ է նշանակել բժիշկ Խոսրով-բեկ Սուլթանովին, և 1919թ. օգոստոսի 22-ին ԱԴՀ-ի և Լեռնային

Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի միջև կնքված ժամանակավոր համաձայնագիրը:

Ատենախոսության մեջ վերլուծվել են ինչպես վերոնշյալ, այնպես էլ հիմնախնդրի մինչխորհրդային շրջանի միջազգային-իրավական կարգավիճակին առնչվող բանալի իրավաքաղաքական փաստաթղթերը: Դրանց տեքստում և ենթատեքստում առկա քաղաքական փաստարկները հստակորեն ցույց են տալիս, որ 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը չի եղել պատմության թատերաբեմում առաջին անգամ հայտնված Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կազմում՝ ինչպես ներկայումս փորձում է ներկայացնել ադրբեջանական քարոզչամեթոդներով, այլ եղել է ինքնակառավարվող կազմավորում: Ինչ վերաբերում է միջազգային հանրությանը, ապա նա՝ ի դեմս Ազգերի լիգայի, Լեռնային Ղարաբաղը դիտարկել է որպես վիճելի տարածք:

Երկրորդ՝ **«Քաղաքական փաստարկները Այսրկովկասի խորհրդայնացման փաստաթղթերում»** ենթագլխում վերլուծվել են ժամանակաշրջանի կարևորագույն իրավաքաղաքական փաստաթղթերը, որոնք իրենց հակասականությամբ հանդերձ եղել և շարունակում են մնալ որպես հիմնախնդրի էության և նրա շուրջը տեղի ունեցած քաղաքական գործընթացների բացահայտման բանալի:

Այդ փաստաթղթերից առաջինը Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման կապակցությամբ Ադրձեղկոմի Խորհրդային Հայաստանին հղված 1920թ. նոյեմբերի 30-ի հեռագիրն է, որից մեկ հստակ քաղաքական հետևություն է բխում, այն է՝ **«Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության անունից... Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը ճանաչվում են որպես Հայկական Սոցիալիստական Հանրապետության բաղկացուցիչ մաս»:**

Նույնիսկ եթե նման հռչակագիր ԱդրԽՍՀ կողմից չի ընդունվել, ինչպես պնդում են ադրբեջանական պատմաբաններն ու քաղաքական գործիչները կամ փաստաթուղթը ոչնչացվել է իրողությունը քողարկելու համար, ինչը ավելի հավանական է՝ իր որոշումներից հրաժարվելու ԱդրԽՍՀ հետագա քայլերի համատեքստում, ապա 1920թ. դեկտեմբերի 2-ին Ադրձեղկոմի՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման կապակցությամբ ընդունված, բայց արդեն ձևափոխված հռչակագիրը, որն ընդունում է ադրբեջանական կողմը, մի շարք կարևոր փաստարկներ է պարունակում: Մասնավորապես՝ այդ հռչակագրով ԱդրԽՍՀ կողմից Նախիջևանն ու Չանգեզուրը ճանաչվել են որպես Խորհրդային Հայաստանի մաս, իսկ **«...Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը ինքնորոշման լրիվ իրավունք է տրվել»** ինչը, կոնկրետ պատմական իրավիճակում, երբ ԼՂ ազգաբնակչության լիզոր ներկայացուցիչների համագումարները երկրամասը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս էին հռչակել, բոլորի կողմից ընկալվել էր որպես Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու հայտարարություն:

Մանրամասն վերլուծվել է հիմնախնդրի ծագման հիմքում ընկած այն փաստաթուղթը, որով Լեռնային Ղարաբաղը մտցվել է ԱդրԽՍՀ վարչական սահմանները: Հիմնավորվում է, որ 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի՝ որպես տարածաշրջանում Ռուսաստանի ծրագրերի իրականացնողի «ընդունած» որոշումը անկախ այն բանից, իրավաբանորեն ուժը կորցրած է թե ոչ, կարևոր իրավաքաղաքական փաստարկ է պարունակում ԼՂԻՄ-ին հատկացվելիք տարածքների մասին: Կովբյուրոն արձանագրում է, որ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին է տրվում լայն մարզային ինքնավարություն: Մերօրյա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դուրս չի եկել Լեռնային Ղարաբաղի՝ Կովբյուրոյի նշած սահմաններից: Հակառակը՝ նրա կենտրոնական տարածքների մի մասը և հյուսիսային շրջանները մնում են օկուպացված Ադրբեջանի Հանրապետության կողմից:

Երրորդ ենթագլխում՝ **«Քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման և ԱդրԽՍՀ կազմից դուրսբերման փաստաթղթերում (1923-1989 թթ.)»** ժամանակահատվածի առանձնացման հիմքում դրվել է մեր կողմից ներկայացվող այն թեզը, որ Լեռնային Ղարաբաղը ԱդրԽՍՀ կազմ է մտցվել և նրա ենթակայությունից դուրս է բերվել ԽՍՀՄ գոյության տարիներին: Փաստաթղթերում առկա կարևոր փաստարկներից մեկն էլ կապված է այն հանգամանքի հետ, որ նույնիսկ խորհրդային տարիներին իր սահմաններում ընդգրկված տարածքների՝ մասնավորապես Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հարցերը չեն եղել ԱդրԽՍՀ ներքին գործը՝ ԽՍՀՄ միասնական միութենական երկրի Սահմանադրության ու օրենքների տեսակետից: Բացի ԽՍՀՄ Սահմանադրությունից, Բաքվի ինքնիշխանությունը իրեն հանձնված տարածքներում սահմանափակող այլ փաստարկներ ևս կան: Նախիջևանի դեպքում՝ դա մինչև օրս գործող Կարսի 1921թ. մարտի 16-ի պայմանագիրն է, իսկ ԼՂԻՄ-ի դեպքում՝ Կովբյուրոյի միջազգային պայմանագրի հավասարեցված 1921թ. հուլիսի 5-ի որոշման երկրորդ կետը՝ «Հանձնարարել Կովբյուրոյի Կենտկոմի Նախագահությանը բանակցել Հայաստանի Կենտկոմի և Ադրբեջանի Կենտկոմի հետ՝ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի համար»: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ իրավական տիրույթում ԼՂԻՄ-ը և ԱդրԽՍՀ-ն պետականության հիմնական հատկանիշներով առավելագույնը մերձեցված կարգավիճակներով կազմավորումներ էին:

Այս ժամանակաշրջանի իրավաքաղաքական փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները վկայում են, որ ԼՂԻՄ-ում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ձևավորման լիազորությունները դուրս էին ԱդրԽՍՀ անմիջական իրավասությունից: ԼՂԻՄ-ում՝ ինչպես ողջ Խորհրդային Միության տարածքում գերակա էր ԽՍՀՄ սահմանադրությունն ու

օրենքները, գործադիր իշխանության ղեկավարի նշանակումը՝ ըստ Կոմբյուրոյի հուլիսի 5-ի որոշման, պետք է համաձայնեցվեր ՀԽՍՀ-ի հետ, իսկ դատախազին անմիջականորեն նշանակում էր ԽՍՀՄ դատախազը:

Նշված ժամանակաշրջանում աշխարհի մի շարք առաջատար երկրներ ու միջազգային կառույցներ նույնպես իրենց դիրքորոշումն են արտահայտել Ղարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ: Մասնավորապես՝ 1988թ. հուլիսի 7-ի Եվրոպական խորհրդարանի բանաձևում հստակ նշված է, որ պատմականորեն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայաստանի մասն է, որը կամայական որոշմամբ է 1923 թվականին հանձնվել Ադրբեջանին: Իսկ ըստ 1989 թվականի նոյեմբերի 19-ին ԱՄՆ ծերակույտի ու ներկայացուցիչների տան ընդունած N 178 միացյալ բանաձևի՝ հակամարտությունը խաղաղությամբ և արդարությամբ կարգավորելու պայմանը մարզի մեծամասնությունն կազմող հայերի ինքնորոշման և ազատության ձգտումը հարգելն է:

Չորրորդ ենթագլխում՝ **«Քաղաքական փաստարկները Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման փաստաթղթերում»**, ներկայացրել ենք հակամարտության կարգավորման գործընթացում առանձնահատուկ կարևորություն ունեցող՝ Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորմանն առնչվող բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները: Դրանք հանդիսանալով նախորդ շրջանի տրամաբանական շարունակությունը, միաժամանակ հանդիսանում են իրավական այն հենքը, որի հիման վրա նախկին ԱդրԽՍՀ տարածքում ձևավորվել են երկու նոր պետական կազմավորումներ՝ Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ կամ Արցախի Հանրապետություն):

Ենթագլխում ցույց է տրվում, որ 1990թ. ապրիլի 3-ի՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» օրենքը և՛ իրավական և՛ քաղաքական առումներով հիմք էր ստեղծում ԽՍՀՄ լուծարման դեպքում դեռևս նրա գործող իրավական նորմերին համահունչ ձևակերպել նոր ստեղծվելիք պետական կազմավորումների կարգավիճակը: Միաժամանակ, դրանով իրավականորեն ամրագրվում էր, որ ազգերի ինքնորոշման իրավունքը առաջնային է վարչատարածքային այն սահմանների նկատմամբ, որոնք ձևավորվել էին նույն ազգերի ինքնորոշման իրավունքների խախտման արդյունքում:

Վերլուծելով նախկին ԱդրԽՍՀ տարածքում երկու նորանկախ պետությունների ձևավորման հիմքում ընկած փաստաթղթերը և բացահայտելով դրանցում առկա քաղաքական փաստարկները, հիմնավորվում է, որ ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակել, ձևավորվել և կայացել է օրինական ճանապարհով: Ադրբեջանի Հանրապետությունն ընդհակառակը, անկախության ուղին ընտրելով կեղծել է հայտնի պատմական փաստերն ու իրողությունները և չառաջնորդվելով գործող ԽՍՀՄ սահմանադրությամբ ու օրենքներով, չի ապահովել ԱՀ-ի ստեղծման իրավական հիմքերի օրինականությունը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Քաղաքական փաստարկները հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում»** բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերի շարժառիթները և բանալի փաստաթղթերի քաղաքական փաստարկները 1991-1992 թթ.»**, վերլուծված են նշված ժամանակահատվածում հակամարտության կարգավորմանն առնչվող կարևորագույն փաստաթղթերը՝ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում: Դրանք հստակորեն ցույց են տալիս, որ, նախ՝ միջնորդական առաքելությամբ հանդես եկող պետություններն առավելապես շահագրգռված էին տարածաշրջանում սեփական շահերի հետապնդմամբ, շարժառիթ, որը շարունակվում է պահպանվել նաև մեր օրերում: Մյուս կողմից՝ դրանցում առկա փաստարկները թույլ են տալիս ժխտելու տարածված այն տեսակետը, ըստ որի Արևմտյան երկրները ճանաչելով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են նրանց սահմանների անձեռնմխելիությունը: Ընդհակառակը, Եվրոպական համայնքը 1991թ. դեկտեմբերի 16-ի՝ «Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միության տարածքում նոր պետությունների ճանաչման ուղենիշաների» հռչակագրով առաջնային է

համարել ազգերի ինքնորոշման սկզբունքը: Իսկ միջազգային հանրության անունից հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված մարմինը՝ ԵԱՀԽ-ն, 1992թ. մարտի 24-ի նիստում ընդունած փաստաթղթով Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչներին ճանաչել է որպես շահագրգիռ կողմ, ովքեր պետք է մասնակցեն բանակցություններին, հանգամանք, որի «անտեսումը» դարձել է հակամարտության կարգավորման առաջընթացը կանխարգելող հիմնական պատճառներից մեկը:

Հատկանշական է Արևմուտքի առաջնորդող համարվող ԱՄՆ-ի ընդունած Ազատության աջակցման ակտի 907-րդ՝ «Ադրբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» բանաձևը, որով այդ երկիրը փաստորեն, ճանաչվել է ագրեսոր՝ զրկվելով նախկին Խորհրդային Միության երկրներին տրամադրվող ֆինանսական աջակցությունից:

Երկրորդ ենթազխում՝ **«Քաղաքական փաստարկները Եվրախորհրդարանի և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի բանաձևերում (1993թ.)»** վերլուծել ենք նշված միջազգային կառույցների կողմից Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ ընդունված փաստաթղթերը, անդրադարձել դրանց առնչվող իրադարձություններին և ներկայացրել փաստաթղթերում առկա իրավաքաղաքական փաստարկները:

Այսպես. 1993թ. հունվարի 21-ին Եվրախորհրդարանի ընդունած թիվ 42/165 բանաձևը հստակորեն դատապարտում է Ադրբեջանին՝ բռնի տեղահանված ավելի քան 300 հազար հայերի ողբերգական վիճակի, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի շրջափակման, հայերի դեմ բռնություններ կատարելու համար, որը հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում, փաստելով, որ այն նպատակ ունի նաև Հայաստանին ներքաշելու զինված հակամարտության մեջ:

ՄԱԿ-ի ԱԽ ընդունած բանաձևերում առկա փաստարկները.

ա. ժխտում են ադրբեջանական քարոզչությունն առ այն, որ ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը վերահաստատում են Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, որ բանաձևերի պահանջները չեն կատարվում Հայաստանի կողմից, որ ՀՀ-ն համարվում է ագրեսոր՝ օկուպացրել է իր տարածքների մի մասը և այլն:

բ. Հաստատում են, որ ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը խախտել և շարունակում են խախտվել հենց Ադրբեջանի կողմից, որի գլխավոր ապացույցն է հանդիսանում թե՛ բանաձևերի ընդունման ժամանակահատվածում, թե՛ նրանից հետո այդ երկրի՝ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու հռետորաբանությունն ու ապակառուցողական քաղաքականությունը:

գ. Վկայում են, որ որպես հակամարտության կողմեր ՄԱԿ-ի ԱԽ-ն ճանաչել է Ադրբեջանին ու Լեռնային Ղարաբաղին, և փաստել՝ որ Լեռնային Ղարաբաղի կողմից ձեռնարկված քայլերը միջազգային իրավունքի համաձայն օրինական բնույթ են կրում, քանի որ դրա նպատակը մի կողմից ԼՂ բնակչության անվտանգության ապահովումն է եղել, մյուս կողմից՝ ԱՀ-ի իրականացվող շրջափակման ճեղքումը՝ բնակչությանը հումանիտար

օգնություն ցուցաբերելու և գոյատևման նվազագույն պայմաններ ապահովելու համար:

Երրորդ ենթազխում՝ **«Քաղաքական փաստարկները հրադադարի կնքման և նրա ամրապնդմանն ուղղված փաստաթղթերում (1994թ.)»** վերլուծելով 1994թ. միջնորդների նախաձեռնությամբ և կողմերի համաձայնությամբ ընդունված կարևորագույն փաստաթղթերը, բացահայտվել են դրանցում առկա քաղաքական փաստարկները: Դրանք կարևորվում են նաև գերտերությունների տարածաշրջանային քաղաքականության շարժառիթների ըմբռնման տեսանկյունից:

1994թ. Բաքվի և Ստեփանակերտի միջև ուղղակի բանակցությունների, ինչպես նաև միջնորդների մասնակցությամբ հրադադարի հաստատման և հակամարտության կարգավորման նպատակով ընդունված բազմաթիվ փաստաթղթերում՝ այդ թվում նաև 1994թ. մայիսի 12-ի հրադադարի համաձայնագրի տակ ԱՀ-ի հետ համատեղ առկա են ԼՂՀ ներկայացուցիչների ստորագրությունները: Հրադադարի հաստատմանն ուղղված բանակցությունները տեղի էին ունենում ոչ միայն միջնորդությամբ հանդես եկող երկրների տարածքում, այլև ադրբեջանա-ղարաբաղյան զորքերի շփման գծում՝ սովորաբար ԱՀ-ի նախաձեռնությամբ: Դրա շնորհիվ էր

հնարավոր դարձել հակամարտության գոտում բազմաթիվ կարճաժամկետ հրադադարների հաստատումը և առանց կողմնակի ուժերի ներգրավվածության այսքան ժամանակ հարաբերական խաղաղության պահպանումը, ինչը միջազգային հակամարտությունների պրակտիկայում եզակի երևույթ է: Դրանք վկայում են, որ Բաքվի կողմից մի քանի անգամ ճանաչվել է ԼՂՀ հակամարտության կողմի կարգավիճակն ու փաստացի անկախությունը:

Ամփոփելով «Քաղաքական փաստարկները Ղարաբաղյան հիմնախնդրի փաստաթղթերում և կարգավորման գործընթացում» վերնագրված ատենախոսությունը, կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

1. Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորմանն ուղղված քայլերի վերլուծությունները հաստատում են, որ միջազգային հանրության և այդ հանրությունը ներկայացնող խոշոր տերությունների կողմից ինքնահռչակված պետությունների ճանաչման գործընթացում որոշիչ դեր են կատարում քաղաքական փաստարկները (իրավական, պատմական, տնտեսական և այլ փաստարկների գոյությամբ հանդերձ): Բանալի իրավաքաղաքական փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկների իմացությունն անհրաժեշտ, իսկ գործնական կիրառությունը կարևոր նախապայման են հիմնախնդրի արդարացի լուծման համար: Հատկապես մեծ է նրանց դերը հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում, որտեղ նրանք դառնում են քաղաքագետ-դիվանագետի հիմնական զենքը:

2. Չնայած արդի միջազգային իրավունքն ընդհանուր առմամբ միջազգային հարաբերությունները կարգավորող նորմերի համակարգ է, որն ունի համընդհանուր նշանակություն, այդուհանդերձ էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում քաղաքականության և իրավունքի փոխհարաբերություններն ու փոխադարձ կապերն առավելապես դրսևորվում են անուղղակի ձևերով: Հիմնախնդիրը, որի նկատմամբ պետությունն անտարբեր չէ, սովորաբար քաղաքականացվում և մեկնաբանվում է սեփական շահերից ելնելով, բայց իրավական ձևակերպման քողի ներքո: Գերտերությունների՝ միջազգային իրավական սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունները դրսևորվել են նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված քայլերում:

3. Ինչպես բոլոր էթնոքաղաքական հակամարտություններում, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ևս, քաղաքական և իրավական փաստարկները փոխադարձաբար պայմանավորված են միմյանցով: Քաղաքական շարժառիթները «սիրում են թաքնվել» իրավունքի՝ հաճախ ակնհայտ թվացող սկզբունքների տարաբնույթ մեկնաբանությունների տակ՝ փակուղի տանելով հակամարտության կարգավորման գործընթացը: Դա նկատելի է նաև մեր դեպքում: Տվյալ պարագայում հայկական կողմերի խնդիրը միջազգային իրավունքի՝ հակամարտության կարգավորման ներբերվող սկզբունքները կեղծ մեկնաբանություններից ազատելը, դրանք իրենց իրական բովանդակությամբ ներկայացնելն ու կիրառելը պիտի լինի:

4. Ներկայումս պատմությունը դարձել է ոչ միայն անցյալը վերարժևորելու միջոց, այլև յուրաքանչյուր պետության ինքնության դրսևորման ու քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետ ու հաճախ օգտագործվող քաղաքական զենք: Դա է պատճառը, որ և՛ միջնորդները, և՛ Բաքուն անընդհատ դեմ արտահայտվելով հակամարտության պատմական հիմքերը կարգավորման գործընթաց բերելուն, հենց այդ հիմքերին են դիմում, երբ մերժում են պատերազմի արդյունքում ստեղծված ստատուս-քվոն: Բայց չի կարելի նաև կառուցողական համարել այն բանակցությունները, որտեղ պատմական փաստարկներին տեղ չեն տրվում: Հարցն առավելապես նրանումն է, թե ինչպես վարվել՝ պատմական փաստարկներն առավել կոռեկտ և արդյունավետ օգտագործելու համար:

5. Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում կարևոր նշանակություն ունեն հիմնախնդրին առնչվող բանալի իրավաքաղաքական փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը: Փաստաթղթերի տեքստում կամ ենթատեքստում կան մի շարք քաղաքական փաստարկներ, որոնք առաջին դեպքում՝ անմիջականորեն, իսկ երկրորդ դեպքում՝ անբացահայտ, անուղղակի ձևով ցույց են տալիս դրանց ընդունման իրական շարժառիթները: Դրանք կարևորվում

են հատկապես հակամարտության կարգավորման գործընթաց ներքերելու և հիմնախնդրի իրական կերպարը միջազգային հանրությանը ներկայացնելու տեսանկյունից:

6. Ղարաբաղյան հիմնախնդրի մինչխորհրդային շրջանի միջազգային-իրավական կարգավիճակին առնչվող բանալի իրավաքաղաքական փաստաթղթերի ուսումնասիրությունը և դրանցում առկա քաղաքական փաստարկները վկայում են, որ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյության կարճատև շրջանում Լեռնային Ղարաբաղը չի եղել նրա իրավասության ներքո՝ ինչպես փորձում է ներկայացնել ադրբեջանական քարոզչամեքենան, այլ հանդիսացել է առանձին միավոր, իսկ միջազգային հանրությունը 1918-1920 թթ. Լեռնային Ղարաբաղը դիտարկել է որպես վիճելի տարածք:

7. Այսրկովկասի խորհրդայնացման ժամանակաշրջանում հիմնախնդրի առնչությամբ ընդունված իրավաքաղաքական փաստաթղթերի վերլուծությունն ու դրանցում առկա քաղաքական փաստարկները հստակորեն ցույց են տալիս, որ մինչև 1921թ. հուլիսի 5-ը և՛ Խորհրդային Ռուսաստանը, և՛ Խորհրդային Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը ճանաչել են որպես Խորհրդային Հայաստանի մաս:

8. 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի «ընդունած» որոշումը, անկախ այն բանից, իրավաբանորեն ուժը կորցրած է թե ոչ, կարևոր իրավաքաղաքական փաստարկ է պարունակում ԼՂԻՄ-ին հատկացվելիք տարածքների մասին: Կովբյուրոն արձանագրում է, որ Լեռնային Ղարաբաղին, այլ ոչ թե նրա մի մասին է տրվում լայն մարզային ինքնավարություն, որի սահմաններից ԼՂԻՄ-ի իրավահաջորդ ԼՂՀ-ն դուրս չի եկել: Հակառակը՝ նրա կենտրոնական տարածքների մի մասը և հյուսիսային շրջանները մնում են օկուպացված Ադրբեջանի Հանրապետության կողմից:

9. Խորհրդային տարիներին ԱդրԽՍՀ սահմաններում ընդգրկված տարածքների, մասնավորապես՝ Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի հարցերը Բաքվի ներքին խնդիրները չեն հանդիսացել՝ միասնական միութենական պետության՝ ԽՍՀՄ Սահմանադրության ու օրենքների տեսակետից: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ իրավական տիրույթում ԼՂԻՄ-ը և ԱդրԽՍՀ-ն պետականության հիմնական հատկանիշներով առավելագույնը մերձեցված կարգավիճակներով կազմավորումներ են եղել: Բացի դրանից, Լեռնային Ղարաբաղը ներառվել է ԱդրԽՍՀ կազմ և փաստացիորեն նրա վարչական ենթակայությունից դուրս է եկել դեռևս ԽՍՀՄ գոյության տարիներին:

10. Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորմանն առնչվող բանալի փաստաթղթերում առկա քաղաքական փաստարկները հստակորեն ցույց են տալիս, որ նախկին ԱդրԽՍՀ տարածքում ձևավորված երկու նորանկախ պետություններից ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակել, ձևավորվել և կայացել է օրինական ճանապարհով: 1991թ. սեպտեմբերի 2-ին ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին Հռչակագիրը և անկախության ուղին ընտրելով, ԼՂՀ-ն առաջնորդվել է դեռևս գործող ԽՍՀՄ սահմանադրությամբ և օրենսդրությամբ միութենական հանրապետություններին տրվող լիազորություններով, իսկ ԽՍՀՄ լուծարումից հետո՝ միջազգային իրավունքի ճանաչված սկզբունքներով:

11. 1991 թվականին անկախացման գործընթաց սկսելով, Բաքուն՝ խախտելով գործող ԽՍՀՄ սահմանադրությունն ու օրենքները, Ադրբեջանի Հանրապետության համար չի ապահովել օրինական իրավական հիմքեր: Ապօրինի գործելակերպի նույն ուղեգիծը շարունակվել է նաև ԽՍՀՄ լուծարումից հետո: Բացահայտ ագրեսիա ձեռնարկելով նորանկախ ԼՂՀ-ի դեմ, ԱՀ-ն ձգտում էր գրավել այն տարածքները, որոնց նկատմամբ Բաքվի հավակնության իրավական հիմքերը ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարումով և ԽՍՀՄ լուծարումով նա այլևս չունեի:

12. Նախկին ԱդրԽՍՀ տարածքում ձևավորված ԼՂՀ իրավական հիմքերի օրինականությունը միջազգային իրավունքի տեսակետից անթերի են, մինչդեռ՝ ԱՀ-ի կազմավորման հիմքում, ինչպես ցույց են տալիս հենց Բաքվի կողմից ընդունած իրավաքաղաքական փաստաթղթերը, ընկած են հայտնի փաստերի խեղաթյուրումը, կեղծիքը, բնությունն ու ագրեսիան, որոնք խոցելի են դարձնում նրա կայացման լեգիտիմության հիմքերը:



13. 1991-1992 թթ. Ղարաբաղյան հակամարտությանն անմիջականորեն առնչվող բանալի փաստաթղթերի վերլուծությունը և դրանցում առկա փաստարկները թույլ են տալիս պնդելու, որ հիմնագուրկ է տարածված այն տեսակետը, ըստ որի՝ Արևմտյան երկրները ճանաչելով նախկին Խորհրդային Միության միութենական հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են նրանց սահմանների անձեռնմխելիությունը: Ընդհակառակը, Եվրոպական համայնքը 1991թ. դեկտեմբերի 16-ի «Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միության տարածքում նոր պետությունների ճանաչման ուղեմիջոցների» հռչակագրով առաջնային է համարել ազգերի ինքնորոշման սկզբունքը:

14. 1992 թվականին միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված մարմինը՝ ԵԱՀԽ-ն, մարտի 24-ի նիստում ընդունած փաստաթղթով Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչներին ճանաչել է որպես շահագրգիռ կողմ, ովքեր պետք է մասնակցեին բանակցություններին: Այս հանգամանքի «անտեսումը» դարձել է հակամարտության կարգավորման առաջընթացը կանխարգելող հիմնական պատճառներից մեկը:

15. 1992-ին՝ Արևմուտքի առաջնորդող համարվող ԱՄՆ-ի ընդունած Ազատության աջակցման ակտի 907-րդ բանաձևով, ԱՀ-ն դարձել է նախկին Խորհրդային Միության միակ երկիրը, որին արգելվում էր Ազատության աջակցման ակտով նախատեսված ԱՄՆ կառավարության ֆինանսական աջակցությունը: Իսկ դրա հիմնավոր պատճառը, ինչպես հստակ նշված է փաստաթղթում, Ադրբեջանի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվող շրջափակումներն ու ուժի կիրառման այլ ագրեսիվ ձևերն են: Այսինքն՝ ԱՄՆ-ը 907 հոդվածը որպես պատժամիջոց էր կիրառում ԱՀ-ի նկատմամբ:

16. 1993թ. Ղարաբաղյան հակամարտության կապակցությամբ Եվրախորհրդարանի և ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած 5 բանալի փաստաթղթերում առկա փաստարկները վկայում են, որ.

ա. Եվրախորհրդարանը հստակորեն դատապարտում է Ադրբեջանին՝ բռնի տեղահանված ավելի քան 300 հազար հայերի ողբերգական վիճակի, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի շրջափակման, հայերի դեմ բռնություններ կատարելու համար, փաստելով, որ դրա նպատակը նաև Հայաստանին զինված հակամարտության մեջ ներքաշելն է:

բ. Ժխտում են ադրբեջանական քարոզչությունն առ այն, որ ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը վերահաստատում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

գ. Հերքում են ադրբեջանական քարոզչամեքենայի այն պնդումները, թե իբր բանաձևերի պահանջները չեն կատարվում Հայաստանի կողմից, թե իբր ըստ բանաձևերի՝ ՀՀ-ն օկուպացրել է ԱՀ տարածքների մի մասը և այլն:

դ. Հաստատում են, որ ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերը խախտվել և շարունակում են խախտվել Ադրբեջանի կողմից, որի գլխավոր սպացույցն է թե՛ դրանց ընդունման ժամանակահատվածում, թե՛ հետո Բաքվի՝ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու հռետորաբանությունն ու սպակառուցողական քաղաքականությունը:

17. 1994թ. Բաքվի և Ստեփանակերտի միջև անմիջականորեն, ինչպես նաև միջնորդների մասնակցությամբ հրադադարի հաստատման և հակամարտության կարգավորման նպատակով ընդունած բազմաթիվ փաստաթղթերում ԱՀ-ի հետ համատեղ առկա են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների ստորագրությունները: Դրանցով Բաքուն մի քանի անգամ ճանաչել է ԼՂՀ դե-ֆակտո կարգավիճակը: Ներկայումս ադրբեջանական կողմը հրաժարվում է նույն ներկայացուցիչների հետ անմիջական բանակցություններ վարել՝ այն դիտելով որպես ԼՂՀ դե-ֆակտո ճանաչման փաստ:

18. Որպես հակամարտության լիիրավ կողմ, ԼՂՀ ընտրված ներկայացուցիչների մասնակցությունը բանակցություններին նշված ժամանակահատվածում եղել է բանակցային գործընթացի հաջող ընթացքի կարևորագույն գործոն և հնարավորություն տվել ԵԱՀԿ ՄԽ շրջանակներում մշակել լուրջ տարբերակներ հակամարտության լուծման համար: Բանակցային գործընթացի այդ տարիների փորձը հաստատում է, որ Ղարաբաղյան հակամարտության

կարգավորման կարևորագույն նախապայմաններից մեկը ԼՂՀ-ԱՀ ուղղակի բանակցություններն են:

19. Հակամարտության կարգավորման Բաքվի և Ստեփանակերտի կողմից համատեղ ընդունված փաստաթղթերի թղթապանակը վկայում է, որ ԱՀ-ն ճանաչել է ԼՂՀ դե-ֆակտո գոյությունը: Նույնը վերաբերում է միջնորդների կողմից ընդունված այն փաստաթղթերին, որոնցում Լեռնային Ղարաբաղը ճանաչվում է որպես հակամարտության և բանակցային գործընթացի կողմ: Բաքվի կողմից հայկական զույգ պետություններին պարտադրված տեղեկատվական պատերազմում մենք պետք է այս փաստերն ու փաստարկները իրենց իրավաբաղադրական նշանակությանը համապատասխան օգտագործենք:

**Ստեփանակերտի հիմնական արդյունքները ներկայացվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.**

1. ԱՄՆ-ի դիրքորոշումը ԱդրԽՍՀ-ԼՂԻՄ հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ԽՍՀՄ հակադրության պայմաններում (ԱրՊՀ գիտական տեղեկագիր), Ստեփանակերտ, 2007, թիվ 3 (16), էջ 48-54:

2. 1921թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշման իրավաբաղադրական տեսանկյունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության խնդիրը, Միջազգային գիտաժողովի նյութեր (նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին), Ստեփանակերտ 2009, էջ 222-224:

3. ԼՂՀ-ն որպես Արևելյան Անդրկովկասի հայության (ադրբեջանահայության) իրավունքների երաշխավոր, (ԱրՊՀ գիտական տեղեկագիր), պրակ 1, Ստեփանակերտ, 2010, թիվ 1 (21), էջ 91-95:

4. Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության իրավաբաղադրական ետնախորքը և «ադրբեջանական» պետության ստեղծման անօրինականության հիմքերը, Լրատու (Մեսրոպ Մաշտոց Համալսարան), Ստեփանակերտ, 2010, թիվ 2 (9), էջ 94-113:

5. ԼՂՀ-ի ու ԱՀ-ի ձևավորման լեգիտիմությունը ԽՍՀՄ լուծարման համատեքստում, (ԱրՊՀ գիտական տեղեկագիր), պրակ 2, Ստեփանակերտ, 2010, թիվ 2 (22), էջ 83-87:

6. 1991-1994 թթ. Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված իրավաբաղադրական քայլերի միտումները, Լրատու (Մեսրոպ Մաշտոց Համալսարան), Ստեփանակերտ, 2011, թիվ 1 (11), էջ 75-84:

7. Պատմության քաղաքականացումը հակամարտությունների կարգավորման գործընթացում (ԼՂՀ օրինակով), Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, հատոր 4, Երևան, 2013, էջ 324-330:

8. Ղարաբաղյան հակամարտության քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման և ԱդրԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում (1923-1989 թթ.), «21-րդ ԴԱԲ», թիվ 4 (56), Երևան, 2014, էջ 28-51:

9. Քաղաքական փաստարկի դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում, «Բանբեր Հայագիտության», թիվ 1 (4), Երևան, 2014, էջ 123-135:

**ПОЛИТИЧЕСКИЕ АРГУМЕНТЫ В ДОКУМЕНТАХ И В ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ  
КАРАБАХСКОЙ ПРОБЛЕМЫ**

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.01-  
«История и теория политической науки».

Защита состоится 9 июня 2015г., в 16:00 часов на заседании специализированного совета 056  
«Политические науки и международные отношения» ВАК РА, действующего по адресу ул. К.  
Улнеци 56/6, Ереван 0037, Республика Армения.

**РЕЗЮМЕ**

Основной целью диссертации является выявление политических аргументов, содержащихся в ключевых документах по Карабахской проблеме. Выбор темы обусловлен важностью этих аргументов в переговорном процессе урегулирования конфликта. В текстах и подтекстах касающихся проблемы документов имеется ряд политических аргументов, которые напрямую или косвенно указывают на истинные мотивы их принятия, раскрытие которых критически важно для их адекватного понимания.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения.

Во введении обосновывается актуальность исследуемой темы, определяются цели и задачи, показана научная новизна, даны краткие описания научных достижений в области исследования.

Первая глава диссертации - “Внутренняя связь политических, юридических и исторических аргументов в процессе урегулирования этнополитических конфликтов” состоит из трех подразделов, в которых обосновывается идея об определяющей роли политических аргументов для международного сообщества и представляющих его мировых держав в процессе признания самоопределившихся республик. Эти аргументы имели и ныне имеют решающую роль в том числе и в процессе урегулирования Карабахского конфликта. Вот почему знание политических аргументов, которые лежат в основе исторических, юридических и политических документов, необходимо, а их эффективное применение является важным условием для достижения поставленных целей в переговорном процессе, где они становятся основным оружием дипломата профессионала. Вместе с тем рассматривается вопрос о взаимосвязи и взаимообусловленности политических, юридических и исторических аргументов в урегулировании этнополитических конфликтов. Поэтому анализируя политические аргументы, в диссертации параллельно рассматриваются “сопровождающие” их исторические и юридические аргументы, в качестве средств обоснования или дополнения первых.

Вторая глава работы - “Политические аргументы в ключевых документах Карабахской проблемы” состоит из четырех подразделов, где дается нацеленный на раскрытие политических аргументов анализ важнейшие документов периода 1918-1991 гг. (с начала конфликта до формирования двух республик - Азербайджанской Республики (АР) и Нагорно-Карабахской Республики (НКР) на территории бывшей Азербайджанской Советской Социалистической Республики (АзССР).

Изучение ключевых политико-правовых документов, касающихся международно-правовых аспектов Карабахского конфликта досоветского периода, четко свидетельствует о том, что в короткий период существования Азербайджанской Демократической Республики Нагорный Карабах не был под ее юрисдикцией, как это сейчас пытается представить азербайджанская пропаганда, а являлась фактически самостоятельной политико-административной единицей. Что касается международного сообщества, то оно в 1918-1920 гг. рассматривало Нагорный Карабах как спорную территорию.

Единственным “документом” о передаче Нагорного Карабаха в состав АзССР является принятое 5 июля 1921г. постановление Кавбюро РКП(б). Если его не рассматривать как решение об аннексии Нагорного Карабаха или его насильственном отчуждении от Советской Армении в пользу АзССР, то этот акт должен быть приравнен к многостороннему международному договору. В этом случае становится очевидным, что автономная область должна была включать всю территорию Нагорного Карабаха. В нарушение решения Кавбюро, предоставившим широкую областную автономию всему Нагорному Карабаху, декрет АзЦИК-а от 7 июля 1923г. образовал область «из армянской части Нагорного Карабаха». Кроме этого, при изучении документов выявляется, что в советские времена, вопросы Нахичевани и Нагорного Карабаха, не являлись внутренними вопросами АзССР - как с точки зрения принятых в двадцатых годах международных документов, так и Конституции и законов СССР.

С другой стороны, НКАО и АзССР с точки зрения основных атрибутов государственности, которыми они были наделены, обосновались как достаточно близкие в юридическом плане образования. Юридически важным фактом является то, что Нагорный Карабах был включен в состав АзССР и фактически вышел из него в годы существования СССР.

Третья глава диссертации - “Политические аргументы в переговорном процессе урегулирования конфликта” - состоит из трех подразделов. В ней обосновывается, тезис о том, что из двух новых независимых государств, сформировавшихся на территории бывшей АзССР, НКР в отличие от АР провозгласила свою независимость юридически полноценным образом.

Избрав путь выхода из СССР, Азербайджанская Республика в августе 1991г., фальсифицировала известные исторические факты и существующие реалии, игнорировала действующие законы и Конституцию СССР и не обеспечила юридически надежные основания для своей независимости. В этой главе диссертации показана безосновательность распространенной точка зрения, согласно которой, признавая независимость республик бывшего Советского Союза, Запад тем самым признавал неприкосновенность границ этих республик. Наоборот, в Декларации “О вехах признания новых республик в Восточной Европе и на территории Советского Союза” от 16-го декабря 1991г. Европейское сообщество рассматривает принцип самоопределения наций в качестве первичного.

Пакет совместно принятых Баку и Степанакертом в 1991-1994 гг. документов по урегулированию конфликта свидетельствует о том, что АР де-факто признал существование НКР. То же самое относится к тем принятым Посредниками документам, в которых Нагорный Карабах признается Стороной конфликта и переговорного процесса. В навязанная РА и НКР информационная война принуждает анализировать эти политико-правовые факты и аргументы системно и последовательно.

В заключении обобщены основные выводы исследования.

**POLITICAL ARGUMENTS IN THE DOCUMENTS AND IN THE REGULATION PROCESS  
OF KARABAKH PROBLEM**

Dissertation on scientific degree of the candidate of political sciences on specialty

23.00.01 - "History and Theory of Political Science"

The public defense of the dissertation will take place at 16:00 on 9 June 2015 in the National Strategic Research Institute under the MOD of RA at the 056 HAC Specialized Chamber session (Address: K.Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Armenia)

**RESUME**

In today's world, one of the main ways to protect the own rights and interests is the ability to defend the own position. The important way of beliefs that relies on stakeholders in the protection of their rights and interests, is the argument.

The aim of the thesis is the revelation of existing political arguments in Karabakh problem key documents and settlement process. The choice of the theme is due to the importance of political arguments in the conflict resolution process. In the texts or contexts of the documents that are related to the problem, there are a number of political arguments that directly or indirectly show the real reasons of their adoption.

The thesis consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and appendix.

In the introduction it is substantiated the actuality of the theme, the object and subject of study, there are mentioned the chronological frameworks and methodological features, formulated the goals and objectives of the thesis, characterized the level of academic preparedness and the source basis of the issue, and represented the scientific novelty of the thesis and its theoretical and practical significance.

The first chapter of the thesis "Intrinsic connection between political, legal and historical arguments in the regulation process of ethno-political conflicts" consists of three sub-headings, and it is substantiated, that the political arguments (together with the existence of legal, historical, economic and other arguments) play a decisive role in the process of recognition of the republics that are self-proclaimed by the international communities, and first and foremost by the large states representing that community. These arguments have had and continue to have a decisive role in the Karabakh conflict regulation process. That is why the knowledge of existing political arguments of the key political and legal documents is needed and their practical application is an important precondition for adequate representation of the issue in its appropriate legal and political aspects during the negotiations to resolve the conflict, where they become the main weapon of the diplomat-politician. At the same time it is shown that the political, legal and historical arguments are mutually connected with each other. Therefore, referring to the political arguments in the thesis there are mentioned the historical and legal arguments ongoing "in parallel" with them, as a way to justify the first ones.

The second chapter, "Political arguments in the key documents of the Karabakh problem" consists of four sub-headings. Here we analyzed the most important documents relating to the problem from its beginning (in 1991) till the formation of two states - Azerbaijani Republic and Nagorno Karabakh Republic (in 1991) in the territory of former Azerbaijani SSR representing the political arguments existing in their texts and contexts. The research of the key political and legal documents relating to the international legal status of Nagorno-Karabakh in pre-Soviet period and the existing political documents clearly indicate that during the short period of independence of Azerbaijan Democratic Republic Nagorno-Karabakh has never been under its jurisdiction as it nowadays tries to present the Azerbaijani propaganda, but it was a separate unit, and the international community considered Nagorno-Karabakh as a disputed territory in 1918-1920. The only decision, that Nagorno-Karabakh should be under the Azerbaijani administrative subordination was the act accepted on July 5, in 1921. If it is not viewed as a Nagorno-Karabakh annexion from Soviet Armenian in favor of Azerbaijan (as it was in Soviet times), it must be equal to the multilateral treaty (Russia is not just a mediator, but it had the most active intervention in the adoption of this document). In that case, it is evident that the autonomous region should have included Nagorno-Karabakh within its borders (breaking RC(w)P Kavbureau decision, by which it was given a wide range of regional autonomy to the whole Nagorno Karabakh, by the decree of 1923, July 7, Azerbaijan's Central Executive Committee decided to create the region from the Armenian part of Nagorno Karabakh). Documents analyses show that in Soviet times the issues of Nagorno-Karabakh and Nakhichevan were not the internal problems of Soviet Azerbaijan. You can see that in the adopted international instruments, USSR Constitution and in laws. On the other hand, in the legal domain of USSR the Nagorno-Karabakh Autonomous Oblast and Azerbaijani SSR were formations which closely had the main attributes of statehood. Finally, Nagorno Karabakh was included and actually (de facto) withdrew from Azerbaijan in the Soviet period.

The third chapter of the thesis "Political arguments in the negotiation process of conflict resolution" is composed of three subtitles, which proves that one of the two newly independent states formed on the territory of the former Azerbaijani SSR, Nagorno-Karabakh declared its independence and was formed and developed legally. Republic of Azerbaijan, choosing the path of independence in August 1991, falsified well-known historical facts and existing events, and without being guided by the laws and Constitution of the USSR, questioned the legitimacy of the legal basis of the newly formed Republic of Azerbaijan. Besides, it is shown that the prevalent view is unfounded, according to which Western states recognized the independence of the former Soviet Union republics, thereby recognizing the borders of these countries. On the contrary, the European Community by the landmarks' Declaration of 1991, December 16 on the recognition of new republics in the territory of Eastern Europe and the Soviet Union prioritized the principle of self-determination of the nations.

The documents' folder adopted by both: Baku and Stepanakert, in 1991-1994 for the conflict resolution, shows that Baku has recognized de facto existence of Nagorno Karabakh. The same applies to the documents adopted by the intermediators, in which Nagorno Karabakh is recognized as a part of the conflict and negotiation process. In the information field, we must use these facts in their proper legal and political significance.

In conclusion the main findings of the study is summarized.